ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի օգոստոսի 08-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/22»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար ամբողջը մեկում համակարգիչների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 06.08.2024թ.-ին ստացված հարցադրման և դրա վերաբերյալ 08.08.2024թ. տրամադրված պարզաբանումը՝

<u>Հարցադրում</u>

«Հարգելի Գործընկերներ, Կասկածից վեր է, որ պատվիրատուն ինքն է գնահատում իր կարիքները, որին համապատասխան սահմանվում են գնման առարկայի բնութագրերը: Սակայն հարցը այլ է: Մենք Խնդրել էինք տեխնիկապես հիմնավորել Ձեր կարիքներին համարժեք չափորոշիչները և բնութագրերը, ըստ որոնց հնարավորություն կստեղծվի ներկայացնել համարժեք առաջարկներ: Եվս մեկ անգամ Խնդրում ենք հստակ պատասխանել հարցին՝ արդյոք ընդունելի է հրավերով ներկայացված QLC տեսակի 1 x SSD 512GB, M.2 2280, PCIe Gen3 հիշողության կրիչի համար առաջարկել միևնույն ծավալի TLC, MLC կամ այլ ստանդարտի կրիչներ, որոնք տեխնիկապես գերազանցում են պահանջվածին:»:

<u>Պարզաբանում</u>

««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/22» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով, մասնավորապես՝ տեխնիկական բնութագրով, սահմանված է. «.... հիշողություն՝ հիմնական կոշտ սկավառակ՝ առնվազն 1 x SSD 512GB, M.2 2280, PCIe Gen3 QLC»:

Առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/22» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարիամ Հայրապետյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/22» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: